

Նի միանձնուհիք, որոց միաբանութեան անշուշտ որդեգրեալ էր, զինքն իրենց արբասուհի ընտրեցին, Այսուհետեւ կը տեսնուի որ ՚ի Սավոյա մնացած ըլլոյ: Արուեստ ուղղելոյ զի՞ուականս, Տիւ Գանժ, և Կիպրոսի ժամանակագիրք անստոյգ տեղեկութիւններ կու տան իշխանուհից յետին տարիներուն և մահուան վրայ: Չիպրարիոյ՝ Սավոյայ գանձուն հաշիւներուն մէջ գտած է իր մահուան յիշտատկութիւնը, 1459ին մարտ 4 ՚ի Վենաքը մերձ՝ ՚ի Սալուցցոյ: Թաղուեցաւ ՚ի Բինեցրով:

10. Էշիվ, զո՞ր Սոգուանպալուի Զիվա կը կոչէ, որ ուղիղ է, և ոչ ծաքքա, որ վրիպակ մ'է: ի 1382 իւր թագաւոր հայրն իրեն թոշակ մը կապեց աղի տուրքին վրայ: Մեռաւ չորս տարի վերջը, այսինքն 1386ին միջոցները:

11. Իզապէլ, որուն վրայ ստոյգ բան

» ՚նուելով, և լոելով մեծ ցաւով Կիպրոսի առեսավի աւերտում է իւր քաղաքամթէ ազգա: » կանաց մահիր, Գաղղիս քաղաքացաւ, ինքզիւրը » գաղղիացի ճանցընել տապով, սերեալ ՚ի գաղ- » ցիացի ազգէ: և այսօր աստ քարից քարքի » մէջ Քարոզի եղրարց վակը լը գտնուի, ուր որ բրութեամբ կ'անցնէ իւր որերը: Նապատառ- » որեալ և որեին Գաղղիս անենքն մեծ և տեսարց, որք զինքն իրենց ազգական կը ճանշ- » նան: »:

Սեբաստոն ի իրեն ընծայեց Լիմասոլի եպիսկոպոսի թիւնը յամին 1888, ապրիլ 27: Վախ- ճանեցաւ 1890ին միջոցները:

7. Յովհաննէս Փիլիպոսոս, վախճանեալ ՚ի ֆամակուրա, քաղքին անձնատուր ըլլալէն ութ-

մը չենք զիտեր: Անկարելի է որ 1397ին հարսնացած ըլլայ, ինչպէս կ'ըսուի, Պետրոսի լուսինեան, կուն Տրապոյսոյ, որդի Բակովիայ և թոռն Յովհաննու իշխանին Անտիպոյ, մինչ Պետրոսի հայրն 1385ին ամուսնացեալ է:

12. Վեցերորդ գուաստր մի, որ 1396ին ողջերուն մէջ կինքերորդն էր: Անկիւրի տէրը, Նիկոսիյից արքունիքը գալով այն տարին, տեսաւ զի՞ազաւորն և ըզմագուհին շրջապատեալ յինն որդւոց, յորոց չորս ուստր և հինգ դուստր: Ան դրանիկը 1374ին վախճանեալ էր ՚ի Հոռոգոս: Այս վեցերորդ դուստրը թէեր. ևս կոչուէր Աղնէս (Երկրորդ այս անուամբ), որ մատաղահասակ մեռաւ անորդի, և որուն վրայ կը խօսի Լորետանոյ:

Կը շարունակուի:

օր առաջ, յամին 1570:

8. Հերակլէս, գերի գարեալ կամ սպանեալ ՚ի Տամկաց յամին 1570:

9. Հեղինէ, երկրորդ այս անուամբ, երկրորդ կին եղալ Նեմետորիս Պայէորոգ ասպետին, որ էր տէր Լիլիայ, Հրամանատար 50 հեծերոց, որ ուստեցաւ Նիփոսից պարագան միջոց, Հեղինէ շրոս որդի ունեցաւ, ուստր մի վախճանեալ զեռաւհասակ. երկրորդ որդի մը, կոչենեալ Փիլիպոս, որ գերի տարտեցաւ ՚ի կ. Պօլիս, որը սիփուուցաւ տաճկանալու, և երկու դստերը, յորց մին կը կոչուէր Պայէորոգա, երկուքն ալ գերի տարտեցան ՚ի կ. Պօլիս յամին 1580:

10. Մարգարիտա, վախճանեալ ՚ի ծննդեանն:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ ԱՅՎԱԶՈՎԱՐԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ

Հուշակաւոր և աշխարհածանօթ նըլ- կարշապետիս վրայ, ազգային և օտար լրագիրը, այս 45 տարի է որ կը գրեն, գովելով աստուածատուր մեծ հանճա- րը. թէպէտ և եղան ալ նախանձաւորք՝ որք ուղելովնասեմացնել այն արքի անման հանճարը, աստի և անտի գումարած ու ամպերուն նման ժողոված՝ դրեցին երգիծանող հատուածներ, այլ լուսա- փայլ հանճարոյ զօրաւոր ճառագայի- ներէն հալածական ցրուեցան: Զգրեց

Յովհաննէս ալպայ ՚ի պաշտպանութիւն անձին և արուեստին՝ լրադրաց մէջ հա- տուածներ, այլ գրեց կոտաներու վրայ զարմանալի և հիանալու ծովային տեսա- րաններ, որոց վրայ կը տեսնանք ոչ միայն տեսանելի աշօք, այլ մտօքի՛ ըմբըռ- նենք, որ ծով, օտ, երկինք լուսաւորք, պարզու խոռվեալ եղանակը, հլու հպա- տակութեամբ պատկերացած են զար- մանալի նշգութեամբ: կը փափազիմք այս վերջին տարիներս նկարածներն,

յետին ճգունք լինին նկարչապետիս, այլ նկարէ ևս շատ պատկերներ 'ի զարմացումն ներկայ և ապագայ սերնդոց : Այս տարի աւարտեց նկարչապետս ծննդոց 64 տարին . 45 տարիէ է, որ առաջին նկարած ծովային աեսարանն վաճառուած է մեծ գնով, իրբ և գործ վարժապետի արուեստին : Բայց վկայութեան անձին և բազմաց, նոյն օրէն սկըսեալ 30000էն աւելի ծովային և բնութեալ այլ այլ տեսարաններ նկարած է . այս պիսիբեղմանաւորևարագանիկարհանճար հազուագիւտ մանաւանդ թէ անդիւտ կարենայ համարուիլ : Գիայ կարծեմաշխարհին վրայ նշանաւոր քաղաք մը, ուր զդունուին նկարչապետիս գեղանկար վրձինին արտադրութիւն մը : Այլ մեր միաբը չէ ներբողել այժմ, արդէն իսկ 'ի գիտնոց արուեստին ներբողեալ և փառաւորեալ նկարչապետնին, մեր միտքը գրաւողն այս օրեր 'ի բազմազդի և յայլալեցու ժողովրդոց հայ հանճարյ ընդունած նախանձելի պատիւն է, նա մանաւանդ այն տեղը յորում աւելի փառօք փառաւորեցաւ նկարչապետս, այն տեղը՝ որ ասկէ հինգ դար տուած, Հայոց իշխանաց, Անեցի ստանիկ մարդկանց արեամբ ներկուած էր, ըստ ազգային պատմութեան, 'ի ձեռն իէտիկ Ամէտ փաշայի : Իրաւի տիսուր՝ միանգամայն ուրախալի հանդիպումն կամ փոփոխութիւն է տեսարանաց աշխարհին, նա մանաւանդ ազգային պատմութեան էջերուն մէջ . թէոդոսիոյ արևելեան ծայրը, ուր հինգ դար տուած նոողիստեցան Հայոց քաջազունք 'ի ձեռն նախանձելի և կառկածաւոր այլազգեցաց, այս օրուան օրս, նոյն տեղ 'ի ձեռն բազմազդի և բազմաթղունութիւն նոյն անձիւ թուղթուած նախանձելի և անկառկած փառաւորեցաւ նոյն ազգին շառաւելին, նկարչապետ Յովհաննէս Այվազովի բայց թուղթուած առժաման տրտուած լիքն ուրախալոյն գառնանքը : Զմեռս մեր մեծապատիւ նկարչապետը մտադիր էր անցնիլ յիտալիա, 'ի կ. Պօլիս և անտիկ թագավորութիւն անցնալու մէջ մեծ անցնալու մէջ կը հնչէր, իսկ մեծ սրահին մէջի գաշնամուրը վայելուց կերպով կ'ածէին ազգային օրիորդք Անեանալիան և կատարինէ Միրզայեան :

բարեալ նորանոր նկարուց ուրուազիծ ներ, զոր և ասա 'ի թէոդոսիա շուտով պատկերացուց . թէոդոսիոյ համար ուրախալի եղուտ Յովհաննէս աղայի դարձը . վասն զի, պէտք է աւելցնենք, որ երբ նա 'ի քաղաքիս լինի, անպակասլինին և հանդէսք և ինչոքը . կը սիրէ նկարչապետս հանճարուոր գրին առատ արդեանց մասնաւորել մերձաւորները . աղքասոք և կարտուեալք ևս կ'ունենան իրենց բաժինը : Նշանաւոր քաղաքացիք ևս պատիւ կը համարին իրենց, հիրասիրել զՄհապատիւ բաղաքացին : Պարզած կը սեպեմ յիշել աստ անցեալ տարուան քաղաքագիւսոյ Պ. Ալթուխովի մէկ նշանաւոր խօսքը, 'ի հանդիսի բացման մեծակառոյց սրահին պատկերաց նկարչապետիս, իրը թէ Փրկչին այն խօսքը, թէ 'ԱՄարգարէ յիւրում գաւորի պատիւ ոչ ունի ։ Կարելի չէ իմանալն կարչապետիս նկատմամբ թէոդոսիացիք զթովհաննէս աղայ ոչ իրը Մարգարէ կը մեծարեն, այլ իրբն գերագոյն հանճար, և եթէ 40 տարիէ աւելի, 'ի բազմաց մեծարեալ, ակն յայտնի մեծամեծ արդեամբք անձն, իր քաղաքացուոմէ շպատուէր, թէոդոսիացիքս մեծ ցուցանքաւոր ապերախտք պէտք էինք համարուիլ :

Այս տարիտօն Յովհաննու կարապետին, ըստ Հայոց տումարին 'ի 14 յունուարի հանդիպելով, որ և միանգամայն տօն անուան նկարչապետիս, օրով առաջ հրաւէրբի տոմանիներ զրկուած էին բազմութեան 'ի ցայդահանդէս 'ի տան Յովհաննէս աղայի : Պատկերաց մեծ սրահը, ըստ Երոպացւոց մեծամեծաց սովորութեան, չքեղ զարդարուած էր, գալարճիկերով ծաղիներովի դրասանդիներով, առիքէն առ 'ի կախ երեք բազմածրագ չահները և այլ ճրագակալք պատերուն վրայ, գիշերը՝ ցորեկի կը դարձընէին, զինուորական երաժշտութիւնն զատ սենեկի մէջ կը հնչէր, իսկ մեծ սրահին մէջի գաշնամուրը վայելուց կերպով կ'ածէին ազգային օրիորդք Անեանալիան և կատարինէ Միրզայեան :

Սրահին ճակատը, ուր բարձրաւ ահեղակ է շինուած, առանին թատերական հանդիսից համար, ամբողջ ներքնապատ, արծածկուած էր դեկերիկ վեհետկոյ ճշգրտատիպ տեսարանով գործ ճարտար մատանց նկարչապետին, հեռուէն կրկնադիտակով նայողին՝ որոց կ'երեար մեծ լրանցքն դողդուն կոհակներով, կոնտոլային՝ մէջը գեղազգեստ կոնտուարաներով, հեռուն վենետիկոյ նաշխան ապարանքն, գրատունն և մասն Ա. Մարկոսի աշտարակազարդ եկեղեցւոյն:

Այդ տեսարանին դիմաց սարքուած էր երկայն սեղան մը քաղցրաւենեաց և օշարակներու: Այդ ամենուն, և մանր առարկայից և զարգերուն վրայ կ'երեսար ընտիր ճաշակ, որք յայտնի կը ցուցընէին՝ թէ վայելուն ընդ գեղեցին յարմարցնող ձեռք մը անցերէ և կարգադրէր է զամենայն: Աւելորդ կը համարիմ մանր ստորագրել ամբողջ հանդէսը՝ որ միշտ տառաօտեան ժամը հինգը տեսեց: քամն զի մինչդեռ երիտասարդը և մանկամարդը պարերուն և քաղցրաւենեաց ճոշակին հետ տրնութեան հետեանք անհանգստութիւնը կը տանէին՝ ի տուն, արդէն ծերունի և պատուաւոր մարգիկ ժամը 11—12ն իրենց յարգութիւնը և մաղթանքը մեծապատիւ կոնսատեան ընելով, տուներին դարձած հանդիստ կը ննջէին:

Քաղաքիս տուաջաւորք, փոխստն մեծահաց խնջոյից նկարչապետին, հանդիսին տասներորդ օրը որ էր կիրակի 24 յունուարի, 50 հոգի միաբանելով, և հաւաքելով մարդ գլուխ 20 ֆրանդ, պատրաստեցին վայելուն ճաշ հրաժեշտի Յովին աննէս աղսոյի, օր 26ն ճամբայ ելաւ գէպ 'ի Պետրպուրիկ. Հանգամանքը այնպէս բերաւ որ մարզոցին մեծ սրահը լինի հանդիսատեղ այն օրուան ճաշին: Այդ շէնքը շինուած է քաղաքիս արևելեան ծայրը, որ երբեմ տուն էր մեծապատիւ Մանուկ աղայի Ալմունճեան կ. Պօլսեցւոյ: կը պատմն, որ ծերք, որոց արտին մէջ գեռ վտա էր աղզիս տառապանաց վրիժառու ոդին, խորհուրդ տուեր են Մանուկ աղայի, որ այդ տեղը լընէ

տուն բնակութեան, որոյ իմէպէտ զիրքը շատ գեղեցիկ, օդինացատ և մաքրուր, տեսարանն բաց, մէկ կողմէն համատարած ծով, և միւս կողմէն բոլոր քաղաքն աշքի զիմաց, բայց չարագուշակ համարուէր, վասն զի ըստ աւանդութեան որ այդ տեղ կամ անմիջապէս մօտք եղած է կէտիկ Փաշայի տունը, որ ժողվիլով Հայոց գլխաւորներն անդէն՝ յետ խըննջոյից խողիլողել տուեր է, և երկրորդ օրը անգլուխ և անիշխան Հայոց վրայ յարձըկելով քաղաքիս փոլոցներէն հայ արեան գետերվազցուցեր է. Կը կարծուի որ այս տանն մօտ բրածե տափը, որ բաւական ընդարձակութիւն ունի, գերեզման լինի նոյն օր նարգուած Հայոց: և ամեննէին բնականի երևոյթ շունի, այլ հողակցոյ է մարդկուցին ձեռօք զիզուած, եթէ ամառնային անձրեւներէն վիրջը մէկն ուզենայ մարզոցիս դիմացէն անցներով գէպյարգելանոց երթալ անշուտ գեռ ևս կը տեսնայ բրակիս ըստրոտը մարդկան ողոքներ և գանկիր: կէս օրէն վերջ ժամը 2 էր, հանդիսականք քաղցրագութուին, ոստիկան, զատաւորք, տեսուչք գվարանոցին և մարզոցին, զօրավայրք և զօրագլուխք և այլ նշանաւոր քաղաքաբացիք 'ի զանազան ազգաց, զինուորականք քրեղ զարդարուած իսկ միւսքսն զգեստուորեալք, ժողոված մարզոցին մեծ սրահը, կը սպասէին նորագոլցստեան, որոյ ճշգրտանկար պատկերն նոխ շրջանակի մէջ գափնէպսակ, գործ քուամքիլ ճարտար պատկերահանիք 'ի Պետրապուրի, կախուած կը փայլէր: Յանկարծ շնկոց մի ելաւ բազմութեան մէջ, այդ լուութիւնը վրդովողն եղաւ որոտումն շնիփորաց զինուորական երաժշտութեան որկ'աւետէր զգալուստ հանդիսաւորին. ուրախ զուարթ ներս մտաւ Յովին ճաշինէս աղայ, կուրծքը աստեղազարդ նշանաւ մեծի պատոյ, և ամենուն հետ ձեռք ձեռքի խառննելով սիրով և շնորհակալու մօք խօսեցաւ: Ալմէն ժամանակը հասած էր ճաշի, ախորժաբար լուսութիւնը նախաճաշիկ պատրաստած սեղաններուն մօտեցան,

ուր ըստ սովորութեան տեղույս աղածոյ միտտեալ և ապխտեալ ձկնեղէնք, ազնիւ ձկնիթք և այլ թեթեւնաշ ուռեա. լիք շարուած էին, և աստի անտի մի մի պատառ առնլով բազմեցան ճաշի սեղանները. հարկաւ առաջին տեղը բազմեցաւ հանդիսաւորն Յովհաննէս աղայ:

Երբ կը յաջորդէին ափսէք և բաժակը, կանգնեցաւ քաղաքաղուկին Պ. Ալթուխով. Տեղորդ, ասաց, — լուսթինը պատեց, երածմտոթիւրեց, — Ենալը, և գու անարգամեծար տէր, որ յանձն առիր քեզի՞ի պատիւ ժողովեալ քաղաքոցոցոց հետ ճաշելու այսօր, թողհատոյ լինին համատոս խօսերս, որք ո՞ի գովեստ կամ իներրող կը զրուցեմ, այլ իրաց Նշմարտութիւն կամ իրրե. նոր պատմութիւն անցած գիպաց: Ազգիս երգիծաբան զրիչը՝ Շշետրին՝ անցեալ ներս օրագրի մէջ կը գրէր, — Գերեզմանական անկենդանութիւն մը պատեր է մայրաքաղաքս, հանդէսք, զրօսանք, կեանք կենդանութիւն զարրած. գիշերուան ժամը 11—12ին, եթէ քաղաքիս փողոցներէն անցնիս, հազիւ քանի մի պատուհանէ կը նշանակ ճրագի պըլպըլալը, և հանկարծես հին տարեգիրն Հ. Գիմէն նստած, մթնալցոյ կանթեղին առաջ, կը գրէ, « Դեռ մի խօսք ևս և աւարտին տարեգիրք իմ»: Սյոյն այս խորհրդածութիւնը կարելի էր արդարապէս ընել մեր փոքր քաղաքին համար: Այո, մի նոր գէպք եղաւ մեծապատիւն նկարչապետիս անակընկալ դարձը՝ ի Յունաստանէ, կենդանութիւնն առաւ քաղաքնիս, և ինքն ստէպ ստէպ իւր տանը մէջ ժողովելով զմեղ, շատ երկմտութիւնք պարզեցան, երկպատակութիւնք գտարեցան, և աւելի ՚ի միութիւն և յառաջադիմութիւն յորդուուեցանք. դատարկենք ուրեմն բաժմակինիս մաղթելով շատ տարիներ մեր պատուաւոր քաղաքացի

1 Ալթիւս պատշաճ կը համարինք մեր ՚ի ըըրտէ շորհակառւթիւն մատուցանել ու մեծապատիւն նկարչապետ Պ. Լոն Lagorio, որ հանցաւ անցեալ արի քարդարել Հայոց կաթո-

նկարչապետի կենաց: Կեցցէ, և ուռա, գուշեց բաղմութիւնն, փառագոյ հնչեց երաժշտութիւնը և դատարկեցան բաժակը:

Երբ ամենկը նստան տեղերնին, Յովհաննէս աղային չնորհակալու մոօք, ասաց. « կ' լոնդոնիմ ձեր պատիւը և յարդանքը. այս առաջին անգամը չէ որ կը պատուասիրիմ՝ ի քաղաքացեացս. այս պիսի հանդէսք ձերացեալ փարժապետիս վայ կը ծանրանային, եթէ չմոտածէի, որ այս հանդէսք գրդիու և իրախոյս են երիտասարդութեան դէպի ՚ի լաւն և յառաջադիմութիւն. ասկէ 45 տարի առաջ երբ այսպիսի պատիւ ընդունեցայ ՚ի թէոգոսիացւոց, այժմեան մեծանուն Պրոֆեսորն ակադեմեացին Պետրպուրկի Պ. Լէոն Լակոոփու<sup>1</sup> 15 տարեկան պատանի էր, որ գեղեցիկ նախանձու վառեալ, հասաւ այդ փառաւոր աստիճանին: Վերջերս քիչ ժամանակ աշակերտոցաւ ինձ Մարիու փոլից պատանին Պ. Գույումճի, որ իրեն ընածին հանճարով այնչափ յառաջեց՝ ի նկարընե ասպարիզին, որ արդարապէս հիացուց իւր տեսարաններով զբուրը իրուսատան և ծանօթացաւ Ելուսպից. թէպէտ շատերն զսոսա իմ աշակերտս համարին, այլ ես ճանշնալով նոցա ըընածին հանճարը և տարրեր ոճով առած յառաջադիմութիւննին, կը հրաժարիմ այդ մեծ պատուէն և կ' առաջարկեմ ձեզ որ դատարիկենք բաժակնիս՝ ի կենդանութիւնն երիտասարդ նկարչաց ՊՊ. Լակոոփու և Գույումճի: Հնչեց պարերաժշտաց, պարպուեցան բաժակը. և նոյն ժամուն շանթացաւ հեռագրական թելն առ նկարիս, ստորագրութեան քաղաքագլուխոյն, թէ և Հանեցաւ այսօր նկարչապետն Այվազովիք հանդիսապէտ գտատարկել իւր բաժակը՝ ՚ի ձեր կենդանութիւն»:

Մինչ հանդիսականք լսածներնուն վրայ կը խորհրդածէին, սեղանը կը շա-

լիցաց եկեղեցն Թէոգոսից, նկարելով աւագիրանին համար մեծ և մեծագին պատկեր ուն, որ նստած թիւն և Մուրիլույի Անարատ յլութեան պատկերի Ա. Կուսին:

բոնակուէր և երաժշտութիւնը քաղցր կ'եղանակէր, և գինեաց բաժակէք կը զատարկէին, վեր կանգնեցաւ Տեսուչն Մարզոցին Պ. Վիհնուկրատով և գեղեցիկ արտասանութեամբ և վայելուչ ձևերով հետեւեալս սկսաւ.

### Տեալք,

Մեր արժանապատիւ քաղաքացին Յովհաննէս կոստանդինովիշ որոյ չորս կողմը սերտբոլորեալ եմք, շատ անդամ լսած է ի զանազան անձանց, որը համոզեալ և հիմնական դատովով թեամբ ցուցած են, թէ այն համբաւն որ տարածուած է ընդհանուր, մինչդեռ ինքն Յովհաննէս ալյա կենդանի է, նորա մահուամբ պիտի չմեռնի, այլ պիտի շարունակէ ազգացյազգս, և գարուց՝ի գարաւ կը փափաքէր, գոնէ մսասմբ, պարզաբանել, թէ ինչ պատճառուաւ ամեն աշխարհ մեծանուն էնկարչապետս, և ինչու ապագայ սերունդը միշտ պիտի յիշեն և փառաւորեն զնա: Զնկարչապետս փառաւորող ազատ տաղանդը, այնպէս ազատ և արձակ է, ինչպէս որ համարձակ և ազատ է այն տարրը, որոյ արհեստական նկարակերտութեան նուիրած է իւր բոլոր ոյժը և կեանքը. այդ ազատ տարրս ծովն է: Ենթ.՝ որպիսի մեծ անուն, ըսկ անունս կը զարթուցանէ մարդուս երեակայութեան մէջ անբաւու-

թիւն պատկերաց, տարագուց և գաղափարաց: Ծով անունը, 'ի գպրութենէ զուրկ մարդկան սիրան ևս թունդ կը հանէ... ամենայն ազդք՝ վաղեմիք և նախապատմականք, նոյն իսկ վարենին, ոչ միայն կը յարգէ և կը պատուէ այդ անծայր և աղսատ տարրը, այլ նորա մէջ իսումբ մը աստուածոց բնակեցընելով, երկիր կը պագանէ, կ'ազօթէ, և առ 'ի հաճել զաստուածում մարդագունի կը դիմէ: Ի՞նչպէս չարմննայ չզարմանայ կրթեալ մարդը այժմեան դարուս, և ի՞նչպէս չյափշտակուի անով, տեարք, 'ի ներկայս պատուասիրեալ 'ի մէնջ նկարչապետս: Ի՞նչ կը նշանակէ յափշտակուիլ 'ի ծովիք. — կը նշանէ մըտաց աշօք հայիլ 'ի նա, ամփոփել 'ի միունորա զանագան երևոյթները, երևակայութենք թափ անցանել նորա անբաւ լայնութիւնը և խորութիւնը որդիւրին բանչէ: Մեծ կը լինի դժուարութիւնը մանաւանդ երբոր 'ի նկատի ունենաք այն շնչին միջոցները որ ունի իրեն գեղարուեատաւոր նկարին, պնակիտը, վրձին և երանդ և անծուկ կտաւը, որոց վրայ հարկագրուած է ըմբռնել և տպաւորել կենդանատիպ այդ ազատ համատարած և ըմբռոստ տարրը: Որոյ համար անհրաժեշտ է: — Կ' առնում ինձ օգնական բացատրութիւնք փուշինի..

### Էմբռնել, ինչպէս ծովը

« Կը թաւալի կապոյտ ալեօք  
« Եւ կը փայլի խըրոխտ տեսօք, . . .

Միտ գնել և լսել ծովուն տիմուր շառաջներուն մէջ

Զբարեկամի բան սըրտազին  
Եւ զձայն նորա 'ի հրաժեշտն յետին.

Հասկընալ ծովն և սիրել

Զնորա շառաջս

Խոռվ արձագանգս, խորախոր վանիս  
Զանդորրութիւնս երեկոյեանս  
Եւ զիսաչս նորին կամայականս:

Նկարել կտաւին վրայ .

թէ ի՞նչպէս . —

« Զհեղինաճեմ զառագաստիկ ձըկնորսին ,  
Ապահովեալն ՚ի վրտանգաց ծովոյին  
Անհոգ սահի ընդ մըկանունս կոհակին :

Ըմբռնել այն վայրկեանը յորում

« Ովկիանոսըն աըխրազդեաց

« Զարթեաւ իւայտաց անպարտելի

« Յինքն ընկլուզեալ ըզնոկս նաւաց . . . »

Զմոռնալ զոյդ

« Գեղեցկութիւն եղերերդու վայրենի » .

Եւ ընդ երկար լսել  
տեսանել

« Զմունչել ծովուն ՚ի գիշերի .

« Լզժայուս նորա , զծոյս բազմազդի ,

« Փայլմունս , ըստուերս , շոինդ կոհակաց

« Տանել ընդ միտս անկասկած , . . . »

Ներշնչալ վայրկեաններուն զայս ա-  
մենը կերպարաննել կախարդական վըր-  
ձինով՝ ՚ի նկատի ունի գեղարուեստա-  
ւոր պատկերահանն . այսպիսի յան-  
դուգն ձեռնամխութե , պէտք է սկայա-  
կան ոյժ մտաւոր , և այս ոյժը ՚ի վերուստ  
կը տրուի մարդու . այսպիսի գեղարուես-  
տաւոր հանճարով պէտք է որ մարդս  
ծնանի : Եւ ահա նա ծնաւ տսկէ 64  
տարի առաջ առ մեզ , ՚ի մերս յաստուա-  
ծառուր (թէոզոսիս) : Ալդ գեղար-  
ուեստաւորն արժմ մեր մէջն է , աս-  
տուած դեռ ևս կենդանի կը պահէ զնս  
նորոնոր սիրագործութեան համար , ՚ի  
հիացումն որպէսներկայ , նոյն և ապա-  
դայ սերնդոց :

Ես , ինչպէս գաստիարակ դեռահաս  
պատանեկութեան , որ մեզ պիտի յա-  
ջործեն , կը համարձակիմ՝ ՚ի դէմն նոյն  
պատանեկութեան առնուլ բաժակ՝ ՚ի  
կենդանութիւն մեծահամբաւ և անմա-  
հանուն մերս ծովմնկար Յովշաննէս  
կոստանդինովչի Այվազովսկի : Կեց-  
ցէ , ուռաւ :

Զինի սորա եղան և այլ շատ բարե-  
մաղթութիւնք՝ զորս մանրամասն գրեն  
աւելորդ կը համարիմ . հանդէսն ամ-  
բողջ 4 ժամ' ակեց . յետոյ կամաց կամաց  
բազմութիւնը սկսան իրենց տեղերն քա-  
շուիլ , չէն և ուրախ սրտով . համոզուած  
լինելով որ մեծապատիւ նկարչապետս

հաճութեամբ ընդունեցաւ իրենքաղա-  
քացոց եղած պատիւը : Հանգիսին  
երրորդ օրը մեկնեցաւ Յովշաննէս աղայ  
ցամաքով Սիմֆերովոյի վրայէն գէպ՝ ՚ի  
Պետրապուրկ , հետը տանելով այս ձմեռս  
նկարած հիանալը նոր տեսարաննե-  
րէն ոմանք , որոց վրայ կարենոր է քանի  
մի խօսք զրուցել :

Որովհետեւ բնութեան՝ մանաւանդ  
ծովային տեսարաններ խիստ շատ նկա-  
րած է Յովշաննէս աղայ , այս երկու  
վերջի տարիներս պատմական արժա-  
նաւոր գիտուածոց կը ծառայեցընէ իւր  
վրձինը . բայց այս դիպուածոց մէջն ևս  
ծովն և այերբ նշանաւոր գերը կը խա-  
ղան , Անցեալ ձմեռ իտալական պատ-  
մութեն մէջ անմահանուն և աշխարհա-  
գիւտ Գոլմանոսն նիւթ եղաւ երեք մե-  
ծամեծ պատկերաց , գիւտն Ամերի-  
կայ , Գոլմանոս յերիտասարդութեան ՚ի  
նաւակուծութե ըմբռնեալ կայմի փաթ-  
թուած , կազատի . խորվութիւն նա-  
ւաստեաց մէջ երբ երկար կը մնան գո-  
լումզոս և իրեններն Ավկիանոսի մէջ .  
Այս տարուան կամ լաւ ևս նորերս նը-  
կարած պատկերաց նիւթերն , մեծաւ  
մասամբ յունական պատմութենէն են ,  
որոյ պատճառն անշուշտ վերջի ժամա-  
նակներս ըրած ճանապարհորդութիւնն  
է : ա . Քանարիս անունով Ցոյնն 1825—  
1829 տարուան պատկերազմին միջոց

Երմուտ կոչուած հրձիգնաւակը տաճկաց տորմղին մէջ ձգելով ինքը փախըստ եամբ կ'ազատիք. Պոպլինա անունով յոյն աղջիկն, թշնամինաւերուն մէջէն նաւակով մը քաջութք անցնելով Յունաց զէնք կը հասցընէ. զ. Քիոս կղղի իւր Հոմերոսի դպրոց անուանեալ Մայութ, ուր Հոմերոս շրջապատեալ է յաշակերտաց, 'ի հեռուստ երիի աւերակ հին տաճարի, դ. ե. Աֆաննք Յունաստանի, մէկուն մէջ ծովն ալէկոծեալ, միւսին մէջ հայելատիպ խաղաղ, մէկուն մէջ լուսին արծաթափախալ, ամմեր և զով օդն և քամին հիանալի կերպով նկարուած, միւսին մէջ տապ և շոդ օղը զգայի կերպով, զ. Քսերքսէս առաջի Ալմենայ,

ՏԱ ՅԱՆՈՒԱՐԻ 1882 — Ի ԹՅՈՌՈԽԹԱ

հանդէս նաւուց նախքան զմարտն Սաւոմինայ, է. Մասն կ. Պօլսոյ, Ասկեղջիւր. Վիրին մասերը տսնց և մինարեից լրսաւորեալ առաւոտեան արեգական ճառագայթներով, ը. Աւոգուֆ, մասն հարաւային ափանց Ղրիմու, պահ առաւոտու, ծով ալէկոծեալ, թ. Ճներէր գետին վրայ նաւակ, մէջը իրեք փոքրռուսք կէս օրուան միջոց խառ հնձելով տուն կը գառնոն: Այս տեսարանաց վրայ մեք միայն մեր զարմանքը կարնաւալ արտայացանել, մանր տեղեկութիւն և դատողութիւններ թողլով գիտնոց և հմտից արհեստին նկարչութեան:

Հ. Քերովք Քուեւերսան

## Ի ՇԻՐԱԿ ԱՅ ԿՐԻՒԽՆ

Բաղդ երջանիկ խանձարրոց հայութեան  
Հանդիսանալ վիշապաց ախոյեան,  
Բզծարաւուս արբուցեալ յապաժոյժ  
Գիւեն աղինք զԱլյարատայ պորտոյն զոյժ:

Արևունք Հայրազգեաց  
Խաւ ար են թըշնամեաց.  
Զայս յիշեն, գուռք սարսին,  
Խոլ խօշիւն յԱրիսին.  
Խիզախեն այլ ի սին.  
Բայց արդ նոքին ըզձեզ  
Ցահեղ կարդան յասպարէզ:

Հայկազունք ի զէն ընթացարուք,  
Ջեռն ի սուր, ձեռն ի տէգ եւ սիրո ի բազուկ,  
Դորնշեսցեն չեփորայք քաջահունչ  
Ի խաղմ' յայս մահաշունչ.  
Կեանք մեր հոյրենիք  
Ի ուազմ' յայս մահաշունչ  
Կանգնին զօրավիզն:

Ո՞վ. զի՞նչ այն դրօշ յազատացըս մարզի  
Ար թըխատիպ գերութեան ցոյց պարզի  
Եղյժ մոլեգնի, եւ պողբատն յունական  
Բզնարայի խայտառակել ըզփառս տան.  
Օ՞ն մանկունք նիրակայ  
Գոլ չարացդ հակակայ,  
Ծզձեզ անք ձեր հարկեն  
Մահահոտ առնուլ զէն  
Բզժանտից թափել քէն.